**Նոտարական ակտի կոդ:** 510-20191223-117-4382871
**Նոտարական ակտի գաղտնագիր:** CSM9UJ

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԵՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան
Երկու հազար տասնինը թվականի դեկտեմբերի քսանչորսին

**«ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ»-ն**, հասցե՝ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՊՈՂՈՏԱ / 7 (ՅՈԹ) ԿԵՆՏՐՈՆ 0023 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, գրանցման համար՝ 286.184.1028629, գրանցման ամսաթիվ՝ 2018-07-19, ՀՎՀՀ՝ 02534328, ի դեմս Գլխավոր Քարտուղարի պաշտոնակատար՝ **ԳՈՀԱՐ ՌԱՖԱՅԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ**, ծնված՝ 04/03/1980, ՀԾՀ՝ 5403800298, այսուհետ «Կողմ-1», որի անունից լիազորագրով հանդես է գալիս լիազորված անձ **ԱՐՏԱԿ ԳԱԳԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ**, ծնված՝ 16/05/1979թ-ին, ՀԾՀ՝ 2605790304, նույնականացման քարտ՝ 010340552, տրված՝ 003-ի կողմից, 27/12/2018թ-ին, հաշվառված՝ ՏԱՎՈՒՇ, ԱՅՐՈՒՄ, ԲԱԳՐԱՏԱՇԵՆ, 10 (ՏԱՍԸ) ՓՈՂՈՑ, 6 (ՎԵՑ) ՇԵՆՔ, 2 (ԵՐԿՈՒ) ԲՆԱԿԱՐԱՆ, (լիազորագիր Ն/8312-2019, տրված՝ 23.12.2019թ., լիազորագիրը տես գործում)

**ՀԱՅԿ ՎԱՉԱԳԱՆԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԸ**, ծնված՝ 09/08/1990թ-ին, ՀԾՀ՝ 1908900865, նույնականացման քարտ՝ 007735087, տրված՝ 006-ի կողմից, 05/04/2016թ-ին, հաշվառված՝ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ԽՈՒԴՅԱԿՈՎԻ ՓՈՂՈՑ, 8 (ՈՒԹ) ՏՈՒՆԸ, այսուհետ՝ «Կողմ-2», որի անունից լիազորագրով հանդես է գալիս լիազորված անձ **ԱՐՄԵՆ ԳՐԻՇԱՅԻ ԱԶԻԶՅԱՆԸ**, ծնված՝ 26/05/1977թ-ին, ՀԾՀ՝ 3605770037, նույնականացման քարտ՝ 000596817, տրված՝ 006-ի կողմից, 06/11/2013թ-ին, հաշվառված՝ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ՀՈՎՀ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹԱՂԱՄԱՍ, 25/2 (ՔՍԱՆՀԻՆԳ ԿՈՏՈՐԱԿ ԵՐԿՈՒ) ՇԵՆՔ, 26 (ՔՍԱՆՎԵՑ) ԲՆԱԿԱՐԱՆ (լիազորագիր վավերացված 21.12.2018թ., ՀՀ «Երևան» նոտարական տարածքի նոտար Մերի Կարապետի Ղազարյանի կողմից, գրանցամատյանում գրանցված 5004 համարով, լիազորագիրը տես գործում),

**1.** Երկկողմ փոխադարձ համաձայնությամբ և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466 հոդվածը, կողմերը որոշեցին կատարել հետևյալ փոփոխությունը 21.01.2019թ. /երկու հազար տասնինը թվականի հունվարի քսանմեկին/ Մարզ Արագածոտն, համայնք Թալին ք. Վ. Տերյան փողոց 24 (քսանչորս) շենք, 49 (քառասունինը) տարածք հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ ՀՀ «Երևան» նոտարական տարածքի նոտար Վանինե Հովսեփյանի կողմից թիվ 197 գրանցմամբ վավերացված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում.
***1.1.*** Պայմանագրի 6.1. կետով սահմանված ժամկետը երկարացնել մինչև 01.01.2021թ. (երկու հազար քսանմեկ թվականի հունվարի մեկը): Պայմանագրի մնացած բոլոր կետերը մնում են անփոփոխ:
**2.** Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վավերացման և Կադաստրի կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում գրանցման պահից:
**3.** Սույն համաձայնագիրը վավերացված է հայերեն լեզվով, կողմերի ցանկությամբ 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի մեկ օրինակը պահվում է նոտարի գործերում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:
**4.** Համաձայնագիրը ենթակա է գրանցման Կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանման գրասենյակում:
**5.** Նոտարի կողմից համաձայնագիրը բարձրաձայն ընթերցվեց կողմերի համար և պարզաբանվեցին գործող օրենքի նորմերը:

ԿՈՂՄ-1

Արտակ Սարգսյան

ԿՈՂՄ-2

Արմեն Ազիզյան

24/12/2019 թվականին սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության «Երևան» նոտարական տարածքի նոտար Վանինե Հովսեփյանիս կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պարզված է համաձայնագիրը ստորագրողների ինքնությունը, նրանց գործունակությունը, իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի և լիազորված անձի լիազորությունները՝ ստուգված:

Գրանցված է գրանցամատյանում 5961-ով

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վանինե Ժորայի Հովսեփյան